ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 282 – Ա 15 հուլիսի 2020թ.

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 18-ի N 979-Ա որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները

***որոշում եմ՝***

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 1 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու հետ կապված կազմակերպության սեփականության իրավունքով ու անհատույց օգտագործման իրավունքով պատկանող գույքի, ինչպես նաև պարտավորությունների կազմի ճշտման գործընթացը և գույքի հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Դաբաղյան Վահագն – մարզպետի խորհրդական /նախագահ/
Խաչատրյան Արամ – մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Չարվադարյան Գեղամ - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող
Սարգսյան Նելսոն – մարզպետարանի ֆինանսական և սոցիալ –տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ
Բիձյան Հակոբջան – մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ

2. Հանձնաժողովին՝ կատարված աշխատանքների մասին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին ներկայացնել հաշվետվություն:

3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:

15.07.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ